

11843

0

891.99.192  
74-93

891.99.192

Հ-93

Հրատարակութիւն Օնիկի

11843

# ՆՈՐ ԶԱՅՆ

ԺՈՂՈՎԱՆԻԿԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՐԳԵՐԻ

ՊՐԻՎԱՏ

891.99-192

Հ-93

Բ Ի Ֆ Լ Ի Ս

Ճպարան «ԵՊՈԽԱ», մուղեսով Խ. 8.

1914

29 JUN 2013 92

9 - 93

ԱՅ

33.852-4  
73.063



## ԽԱՀԱՐԵԼ ԵՄ ԻՆՉՊԻՍ ԳԻՇԵՐ

Խաւարել եմ ինչպէս գիշեր,  
Իմ չորս կողմս է փոթորիկ.  
Չունեմ ևս սէր, չունեմ ևս սէր,  
Ես սիրում եմ իմ հայրենիք:

Այստեղ անթիւ անբախտ մայրեր,  
Որդեկորոյս ծնողներ,  
Եղայրազուրկ անթիւ քոյրեր,  
Թափում են յորդ արցունքներ:

Ինձ մի սիրիք, ինձ մի սիրիք,  
Ես շատ ու շատ փոխւել եմ.  
Առ թաշկինակդ սրբիք աչերդ,  
Ես քեզ սիրել չեմ կարող:

Մնաս բարե, իմ աչքի լոյս,  
Սէրդ լինի ինձ խրախոյս.  
Այդ արտասուրը ես պիտ թափեմ,  
Որ իմ ցաւերս սփոփեմ:

Ա՞յս, աւէք ինձ քաղցը մի քուն.  
Կեանքից հեռու պանամ,  
Օյն աշխարհը, ուր խնդութիւն,  
Ուր սէրն է միշտ անթառամ:



596755  
17041-58

1368-2002

Ա ւ դ ը մ Ա ւ ի կ ի ւ

Իբրև արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ,  
Թնդացնում ես երկինք-գետինք տենչավառ-  
Սուրբ անունդ պիտի յիշեի դարեղար,  
Հոկայ լերինք բեզ ապաստան, Անդրանիկ:

Քիւրդ ու տաճիկ երբ լսեն քո անունը,  
Օձերի պէս պիտի սողան իրանց բռւն.  
Երակներիդ ազնիւ քաջի արիւնը.  
Չը ցամաքէ մինչ յաւիտեան, Անդրանիկ

Հայոց կուսանք դափնեայ պսակ թող հիւսեն,  
Քնըյշ ձեռամբ ըս ճակատը պսակն.  
Գոհարներով անվախ կուրծքով զարդարեն.  
Կեցցէս յաւէտ գու անսասան Անդրանիկ.

Հայաստանի սոխակները քեզ համար  
թող դայլայլեն գիշեր-ցերեկ անդադար.  
Անյաղթ մնաս դու քաջ կռւի սիրահար,  
Հայրենիքի տէր ու պաշտպան Անդրանիկ:



## Ե Ն Գ Ր Ը Ն Ի Կ

### ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Մութ գիշերին անվախ ֆիդան  
Ազատօրէն ման կուգայ.  
Արի, գնանք Մայր-Հայաստան,  
Անդրանիկը դէմ կուգայ: (կրկնել)

Հայերուս մէջ Վասակներու  
Թիւը արդէն պակսում է:  
Հայ պատանին սուրը ձեռքին  
Նոցա մաս-մաս մորթում է:  
Անուշաբոյր թարմ ծաղիկներ  
Հայ օրիորդը նւիրեց.  
Շուն շեխերին ջարդել փշրել  
Անդրանիկը վճռեց:



### ՀԱՅԴՈՒԿ, ՄԻ ՎԱԽԵՆԱՐ

Հայդուկ, մի վախենար քրդի գնդակից,  
Նա մահաբեր չէ քաջերիդ համար,  
Քո «ջան ֆիդայի» ահեղ անունից  
Քիւրդը սոսկում է ինչպէս դիւահար:

Առէք հրացան ու ելէք հանդէս,  
Տանջանքի մէջ է ձեր մայր-հայրենիք.  
Միթէ չէք լսում՝ նա կանչում է ձեզ,  
Օգնութեան հասէք, հարազատ որդիք:

Ձեր հրացանը վրէժով լցըէք,  
Զարկէք թշնամուն, թշնամուն գաղան,  
Դուք ձեր մօր սիրուն զարկէք ու ընկէք,  
Միայն թէ կեցցէ, կեցցէ Հայաստան...



### Ք Ա Յ Լ Ե Ն Ք

Յուսահատել մեղք է, ընկեր,  
Արիացիր, ողի առ,—  
Նայիր, փայլեց հեռւում լապտեր,  
Մենք էլ կառնենք շուտ դադար...

Արիացիր, սիրա առ, ընկեր,  
Շարունակենք մեր ուղին,  
Լսիր, կարծեմ՝ թէ զանդակներ  
Ղօղանջեցին սարերէն...

Ահա բացւեց աղօթարան,  
Վստահ, ընկեր, առաջ քայլենք,  
Զինւոր ենք մենք աղատութեան  
Եւ անփորձ տեղ կը հասնենք...



ՀԱՄԱԶՈՒՄՊԻ ԵՐԳԸ


Ծագեց արև ազատութեան,  
Փախէք ամպեր երկնքից,  
Համազասպը իւր խմբովը  
Կուգայ Խաչէն գաւառից։

Գալիս էին բազմաթիւ զօրքով  
Աղիգեօզալ Բէգովը.  
Յանկարծ ընկաւ Ասկեարանը  
Հերոսների ուռկանը։

Թուրք խուժանը սարսափահար  
Փախչում էին. իսկ գլխակոր,  
Թողնելով իրանց յետեից,  
Դիակներ հարիւրաւոր։

Խաչէն գաւառը սրբեցիր  
Թարաքեամայ թուրք ցեղից.  
Փողովդին հանգիստ տւիր,  
Թուրք չի անցնում այնտեղից։

Հայերիս տէր Դաշնակցութիւն,  
Քաջեր ունիս արտալի.  
Ամբողջ աշխարհ հոչակւեցաւ  
Համազասպը պանծալի։



ՀԱՅ, ՄԷՐԻԿ ԶԱՆ

Հովերն առան սար ու ձորեր,  
Անպերն ելան, մութն ընկաւ,  
Անդին մէրիկ, հէրիկ յուսաս,  
Քո շողշողուն աստղը ընկաւ,  
Լաց, մէրիկ ջան, որ էլ չեմ գայ,  
Վէրքը սրտիս տուն չեմ գայ:  
Կաթիլ-կաթիլ ամախ էր ցողում,  
Սև ու պղտոր երկնքից,  
Մաղիկ-մաղիկ վէրքըս էր ծորում  
Իմ անգուման սև սրտէս,  
Լաց, մէրիկ ջան, որ էլ չը գամ:  
Վէրքը խորն է, ճար չը կայ:

Անգութ կեանքում վէրք ըստացայ,  
Մրտանց սիրած ընկերէս,  
Անխիղճ կեանքում վէրք ըստացայ  
Անուշ սիրած քոյրիկէս,  
Լաց, մէրիկ ջան, որ էլ չեմ գայ,  
Ազիզ բալէդ էլ չի գայ:

Յ Ո Յ Ս

...Ինչքան երկինքը ամպէ, որոտայ,  
Կայծակ, հուր, երկաթ, շանթեր արձակէ.  
Թէ սաստիկ կարկուտ, շատ անձրև տեղայ,  
Վերջ դարձեալ պայծառ արև կը ծագէ:

Թէ ծովը ծփայ կատաղի սաստիկ,  
Իւր ալիքներով ափից դուրս չի զայ-  
Թող իջնի թաթառ, հանէ փոթորիկ,  
Թող փչէ հողմը ինչքան կամենայ:  
Թող պատերազմեն ազգերն իրար հետ,  
Թող մէկը միւսի արիւնը խմէ.  
Թող խփեն իրար, գնդակ, մահու նետ,  
Եղբայրն իւր եղբօր թող միւլ ծամէ...  
Կանցնի բոլորը, կուգայ ժամանակ,  
Ամեն առարկայ իւր վերջը ունի,  
Որդին կը նստի հօրը փոխանակ,  
Նոր հոգի, նոր կեանք նորից կսկսուի:

ԹԻԿԹԻՆՔԴ ԼԱՅՆ

Թիկունքդ լայն, թևերդ ուժգին,  
Կոներդ ուժեղ, պինդ պողպատ,  
Սիրել գիտես, կուել չիտես,  
Դու անզգայ երիտասարդ:

Քոյրդ տանում են քիւրդերը,  
Եղբօրդ արիւնն են ծծում.  
Դու անտարբեր, սառն արիւնով,  
Հանգստութիւն են վնտրում:

Ամօթ քեզի, հազար ամօթ,  
Որ զէնք չունես քո ձեռքին,

Քո եղբօրդ կուի դաշտում  
Տապալում է թշնամին:

Ձեռքդ տուր ինձ, երդւենք այստեղ,  
Թողնենք փառքը աշխարհի,  
Գնանք, կուենք առիւծաբար,  
Ի սէր ճնշւած հայ ազգի:

### ԲԱՒԱԿԱՆ Է ՔՈՒՆ

Զարթեցէք, հայեր, քնանք բաւական,  
Հնչում է փողը պատերազմական.

Առնենք զէնքերըս, յառաջ սլանանք,  
Կաւող քաջերի հետը միանանք:

Ամօթ է ամբողջ մարդկութեան առաջ,  
Բաւական է մեղ, լաց կոծ և հառաչ.  
Մեր արտասուրքին մէկը չը զթաց,  
Ծոյլին, վախկոտին չի զթայ Աստւած:

Մնանք մեռնելու, էլ ի՞նչ կը սպասինք,  
Արքայութեան բաժին ունենք չասենք.  
Եթէ չը մեռնենք մեր ազգի համար,  
Մեղաւոր ենք մենք, չենք լինի արդար:

Վանենք մեր սրտից վախը և ահը,  
Զարդենք և փշենք բռնութեան գահը,  
Մահը իմացողին համար չէ մահը  
Գաղափարի զոհ նա է անմահը:

S. 9.

### ՍԵՐՈԲ ՓԱՇԱՅԻ ԵՐԳԸ

Ով որ քաջ է, ինչ կը սպասէ,  
Արդէն ժամանակ է, թող գայ:

Մահ-պատերազմի օրհաս է.  
Ո՞վ որ անվախ քաջ է՝ թող գայ:

Կամ կուենք, պարպենք, վերջանանք,  
Կամ զէնքով փրկութիւն ըստանանք,  
Կուելով փրկենք Հայաստան,  
Ազնիւ մտածողը թող գայ:

Այս մեր Սասուն սարէ Սիփան  
Կոիւ ունէ միշտ անխափան,  
Կուելով փրկենք Հայաստան,  
Այս յոյս ունեցողը թող գայ:

Այս հինգ դար է մեզ կսպանեն,  
Բոնի կրօնքէն կը հանեն,  
Մեր կին աղջիկներ կը տանեն.  
Պատիւ ունեցողը թող գայ:

Երկաթէ մարդ, քարէ հոգի,  
Վրէժինդիր լինի թուրքին,  
Անվախ քարի տակ չոքողը  
Անսխալ խփողը թող գայ:

Վերջապէս մենք ունինք կոիւ,  
Զէնքով պիտի մաքրենք հաշիւ,  
Մեր հայրենեաց փառք ու պատիւ՝  
Մերոք փաշային միբողը թող գայ:

ՀԱՅԻՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Դաշնակցական խումբ, գնանք մենք Սասուն,  
Մեր հայ եղբայրներ մեզ են ըսպասում.  
Անդրանիկը քաջ իւր ընկերներով  
կուզէ պատերազմ, կսպասէ գարնան:

Մօտ է գարունը, շուտով կը բացւի,  
Հայի խօսքը քաջ, շուտով կը լսի,  
Հայերն անվախ, հոգով միացած,  
Հրացան ուսերին մերն է ռնոր-տարին».

Խմբապետները հոգով են կանգնած,  
Ֆիդայի ոյժով գնում են առաջ.  
Առաջն է կանգնած Անդրանիկը քաջ,  
Գոռում է գոչում, կուզէ պատերազմ:

Յիշէք, եղբայրներ, մենք շատ քնեցինք,  
Բաւական է մենք այսքան համբերենք.  
Մայր-Հայաստանը ձեռքից հանեցինք,  
Հիմայ ոյժ ունենք, դարձեալ հետ  
կառնենք:

ՀԱՅԻՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

Ես ընկած եմ քիւրդերու մէջ,  
Երնաշաղաղ վէրքով լցւած,  
Ինձ կարծել են մեռած,  
Թողել գնացել են.

Կիսամեռ թշւառս ի՞նչ անեմ,  
Մնացել եմ անօգնական:

Երբ նայում եմ լուսնի լուսով,  
Հազարներով փուած գետին,  
Սատկած և վիրաւոր.  
Շարիֆ-բէկ քիւրդեր մրմնջում են միլա,  
Վախկոտ հեկտօներ.  
Տեսարանն ուրախալի էր.  
Թեթևանում էր իմ վշտեր:

Քիւրդ լաց-կոծերի միջից  
Ցանկարծ լսւեց. «Մայր իմ անուշ»...  
Ախ, այդ ձայնն էր հայկական:  
Գնացի դէպ նորան, տեսալ ընկերս էր,  
Զինւոր էր նա, վէրքը ստացած,  
Արեան դաշտում ինձ նման:

Զեռք մեկնեցի, մտերմիս ասի.  
«Նայիր ըոլորդ, հոգի ստացիր»,  
Հայի յաղթութիւնը մեծ է, ջան ֆիդան,

Փառք իւր Դրօշակին:  
Վիրաւորներս սիրտ առած,  
Հեռացանք արեան դաշտից:

Էլի սաղ եմ քաջի պէս,  
Տես իմ վէրբերուս տեղեզը.  
Հաւատացէք հայ զինւորի ուղղութիւնը,  
Որ չխնայեց իւր ազգին իր արիւնը,  
Ազատութեան զոհեր ենք մենք,  
Ազատ կամքով, ազատ խղճով:



1368-2002

ՀՀ Ազգային գրադարան



NL0373878

73.063